ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքի

ղեկավարի 2018թ.-տարեկան հաշվետվություն

29.01.2019թ.

Հարգելի գործընկերներ, ավագանու անդամներ և հրավիրվածներ Ձեզ ենք ներկայացնում Լենուղի համայնքում մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Հաշվետվության ներկայացմանը ներկա են Արմավիրի մարզի մարզպետարանից Ղորղանյան Արշակը, ավագանու անդամներ և հրավիրվածներ:

Գյուղատնտեսություն:

_ Գյուղը իր ուղղվածությամբ համարվում է գյուղատնտեսական

Լենուղի գյուղը ունի 572հա գյուղ նշանակության հողեր, որտեղ հիմնականում մշակվում են պտղատու և խաղողի տեխնիկական սորտի այգիներ: Գարնանը մաքրվել և վերանորոգվել է ներտնտեսային ոռոգման ցանցը՝ շուրջ 35 կմ: Ստացել ենք դիզվառելիք 5800 լ. (1 լ արժեքը 380 դրամ):

Կրթություն և մշակույթ

Գյուղն ունի վերանորոգված դպրոցի շենք, որտեղ սովորում են 220 աշակերտ: Դպրոցը համալրված է բարձրորակ և որակյալ մասնագետներով: Գյուղապետարանը միշտ իր աջակցությունն է ցուցաբերել դպրոցին:

Անմխիթար վիճակում է գյուղի մշակույթի տունը, որի շենքում է գտնվում նաև գյուղի գրադարանը, որտեղ կա 7000 անուն գիրք: Մշակույթի տունը և գրադարանը վերանորոգման կարիք ունեն: Այսօր միջոցներ է ձեռք առնվում գյուղի գրադարանը ավելի ապահով և համապատասխան վայր տեղափոխելու ուղղությամբ:

Տրանսպորտ

Գյուղն ունի 2 կմ միջտնտեսային ճանապարհ, որը ասվալտապատված է: Գյուղը շրջկենտրոնին և շրջակա գյուղերին կապվում է երթուղային տաքսիների միջոցով, որոնք գյուղից մեկնում են յուրաքանչյուր 30 րոպեն մեկ:

Այս տարվա աշնանը վերանորոգվել է մոտ 1,5 կմ երկարությամբ դաշտամիջյան ճանապարհ, ինչպես նաև մեկ գյուղամիջյան փողոց (6-րդ փողոց):

Կոմունալ տնտեսություն

Գյուղում կատարվում է աղբահանության աշխատանքներ շրջիկ աղբահան մեքենայի միջոցով, որը աղբը տեղափոխում է 2 կմ հեռավորության վրա գտնվող աղբանոց: Ընդհանուր

ներտնեսային խմելու ջրի խողովակները անցկացվել են 1962թ., որոնց փոփոխման խիստ անհրաժեշտություն կա: Խմելու ջուրը մատակարարվում է խորքային հորերի միջոցով: Կատարել ենք խմելու ջրի խողովակների վերանորոգման աշխատանքներ: Նախատեսվում է շարունակել ջրի խողովակների վերանորոգման աշխատանքները նաև 9-րդ փողոցում:

Ֆինանսներ

Ներկայացվում է համայնքի 2018թ. բյուջեն եկամուտների և ծախսերի մեկ տարվա կտրվածքով: Համայնքի 2018թ. վարչական բյուջեի եկամուտների մասով նախատեսված 41970,0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 37659,8 հազար դրամ, կատարվել է 89,7%-ով, որից սեփական եկամուտներ՝ նախատեսված 20127,2 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 15817,0 հազար դրամ, կատարվել է 78,6%-ով:

Պետբյուջեից ստացված դոտացիա 21842,8 հազար դրամից մուտք է եղել 21842,8 հազար դրամ:

Ներկայացվում է սեփական եկամուտները ըստ հոդվածների

1. Հողի հարկ՝ նախատեսված 9627,2 հազ.դրամից փաստացի մուտքագրվել է 6151,9 հազար դրամ:

2. Գույքահարկ՝ շենքերի և շինությունների համար նախատեսված 500,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 506,4 հազար դրամ:

3. Ֆիզ.անձ և իրավ. անձանց փոխադրամիջոցների գույքահարկ նախատեսված 4090,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 4438,8 հազար դրամ:

4. Վարձակալական հողերի վարձավճարից նախատեսված 2600,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 1783,0 հազար դրամ:

5. Տեղական վճար-նախատեսված 3160,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 2903,9 հազար դրամ, որից աղբահանություն 1290,0 հազար դրամից, փաստացի հավաքագրվել է 805,7 հազար դրամ:

6. Տեղական տուրքեր –նախատեսված 150,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 33,0 հազար դրամ:

Ծախսեր՝

Ներկայացվում է 2018թ. վարչական բյուջեով նախատեսված ֆինանսական ծախսերը ըստ հոդվածների

1. Աշխատավարձ- նախատեսված 20210,0 հազ. դրամից ծախսվել է 19677,0 հազ. դրամ:

2. Պարգևատրում- նախատեսված 1200,0 հազ. դրամից ծախսվել է 99,0 հազ. դրամ:

3. Էլ.էներգիայի – նախատեսված 9330,0 հազ. դրամից ծախսվել է 7390,6 հազ. դրամ:

4. Կապի ծառայություն – նախատեսված 500,0 հազար դրամից ծախսվել է 345,6 հազ. դրամ:

5.Գործուղման ծախս – նախատեսված 70,0 հազար դրամից ծախսվել է 70,0 հազ. դրամ

6.Համակարգչային և տեղեկատվական ծառայություն- նախատեսված 480,0 հազ. դրամից ծախսվել է 240,5 հազ. դրամ:

7. Ներկայացուցչական ծախսեր-նախատեսված 300,0հազ. դրամից ծախսվել է 270,0 հազ. դրամ:

8. Մասնագիտական ծառայության ծախսեր- նախատեսված 1000,0 հազ. դրամից ծախսվել է 280,5 հազ. դրամ:.

9. Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսեր նախատեսված 2270,0 հազ. դրամից ծախսվել է 2108,0 հազ. դրամ որից՝

- դաշտամիջյան ճանապարհներ ավազապատում 920,0 հազ. դրամ
- փողոցների լուսավորում 983,0 հազ. դրամ
- համայնքի փողոցների հարթեցում 205,0 հազ. դրամ

10. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում- նախատեսված 70,0 հազ. դրամից ծախսվել է 70,0 հազ. դրամ:

11. Գրասենյակային նյութերի ձեռքբերման ծախսեր- նախատեսված 280,0 հազ. դրամից ծախսվել է 250,0 հազ. դրամ:

12. Տրանսպորտային ծախսեր- նախատեսված 990,0 հազ. դրամից ծախսվել է 990,0 հազար դրամ:

13. Կենցաղային և հանրային նյութերի ձեռքբերման ծախսեր- նախատեցված 800,0 հազ. դրամից ծախսվել է 377,4 հազ. դրամ:

14. Հատուկ նպատակային նյութեր- նախատեսված 1450,0 հազ. դրամից ծախսվել է 763,4 հազ. դրամ:

15. Սոցօգնություն ծախս –նախատեսված 2000,0 հազ. դրամից ծախսվել է 1570,0

16. Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններ- նախատեսված 250,0 հազ. դրամից ծախսվել է 0,0 հազ. դրամ:

17. Պարտադիր վճար- նախատեսված 70,0 հազ. դրամից ծախսվել է 10,0 հազար դրամ:

18.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներ- նախատեսված 700,0 հազ. դրամից հատկացում 0,0 հազ. դրամ:

Ընդամենը 2018 թ. բյուջեի վարչական մասով նախատեսված 41970,0 հազար դրամից ծախսվել է 34512,0 հազար դրամ:

2018թ. տարեկան բյուջեի ֆոնդային մասով կապիտալ վերանորոգման ծախսերի համար նախատեսված 6175,3 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 495,0 դրամ, որը ծախսվել է Լենուղի համայնքի խորքային հորերի պոմպերի վերանորոգման համար:

Աշխատավարձի գծով պարտքեր չունենք:

Համայնքի հիմնահարցերն են՝

1. Խմելու ջրի ներտնտեսային ցանցի հիմնանորոգում

2. Մշակույթի տան վերանորոգում.

3. Մանկապարտեզի վերակառուցում:

ԼԵՆՈՒՂՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՂԱԶԱՐՅԱՆ